<<ՀՀ Արագածոտնի մարզի Քուչակի Մ. Նալբանդյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրինությունը հայտարարում է մրցույթ՝ ռուսաց լեզվի /17 դասաժամ/ և տեխնոլոգիայի /4 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:

Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Ուսուցչի թափուր աշխատատեղերի համար մրցույթին մասնակցել ցանկացողները հանձնաժողով են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1. Դիմում /Ձև 1/, մեկ լուսանկար 3x4 չափի,
2. Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ /դիպլոմ/,
3. Անձը հաստատող փաստաթուղթ,
4. <<<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ /առկայության դեպքում/,
5. Ինքնակենսագրություն /Ձև 5/
6. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
8. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /առկայության դեպքում/,
9. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են մինչև սեպտեմբերի 7-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 13-ին՝ ժամը 14:00-ին, Քուչակի Մ. Նալբանդյանի անվան միջնակարգ դպրոցում. հասցեն՝ ՀՀ Արագածոտնի մարզ, Ապարան համայնք, Քուչակ բնակավայր, 11-րդ փողոց, շենք՝ 14:

Տեղեկությունների համար զանգահարել 094 82-60-41 հեռախոսահամարով: